

XX ԿԱՐԻ ՀԱՅ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

XX դ. հայ-անգլերեն բառարանագրությունը՝ XIX դ. բառարանագրության անմիջական շարունակությունն ու զարգացումն է։ XX դ. հայ-անգլերեն բառարանները հիմնականում լույս են տեսել Գ. Պոլսում, Միայն Հ. Հակոբյանի² և Երանի³ բառարաններն են, որ հրատարակվել են Բոստոնում։ Դրանք բոլորն էլ զործնական բնույթի, առձեռն բառարաններ են։ Բացառություն են Հ. Զաքմագճյանի⁴ և Մ. Գոյումջյանի⁵ բառարանները, որոնք ընդարձակ են և կազմված են գիտական սկզբունքներով։ XX դ. հայ-անգլերեն բառարանների շարքում գերակշռում են անգլերեն-հայերեն բառարանները և դա հասկանալի է. բանի որ այդ բառարանները կոչված են բավարարելու տարագիր հայերի առօրյա պահանջները։

XX դ. հրատարակված առաջին բառարանը Մ. Մինասյանի⁶ հայ-անգլերեն բառարանն է՝ 25 հազար բառահոգվածով։ Այստեղ հայերեն զխաբառերի համար որպես աղբյուր հեղինակը օգտագործել է Ե. Տեմիրճիպաշյանի⁷ և Կ. Ոսկյանի⁸ բառարանները։ Մ. Մինասյանի բառարանը կազմված է այբբենական սկզբունքով, ուր հոմանիշները զատված են ստորակետերով, իսկ բաղմիմաստությունները՝ երկու կետով։ Հեղինակն առանձնացրել է տերմինները և տերմինային արժեք ունեցող բառերը, որոնք համառոտակի բացատրված են։ Օրինակ՝ Սկարոս (ծուկ) ձկնաբանական։ Մարդակապիկ (մեծ կապիկ մը) կենդանաբանական։ Քրոմատ (աղ մը) քիմիական։ Առանձնացված են նաև համանունները։ Կաթ՝ որպես հեղուկ և կաթ տնս կաթիլ։ Մայր՝ ծնող իմաստով, մայր՝ որպես ծառ։ Գլխաբառերի տակ բերված են զանազան դարձվածքներ, ոճաբանական միավորներ։ Օրինակ՝ սիրտ զխաբառի տակ բերված են. սիրտ առնուլ, մեկուն սիրտն առնուլ, մեկուն սիրտը թունդ հանել, մեկ սիրտ, մեկ հոգի ըլլալ, սիրտը խառնել, սիրտը ծակել, սիրտը կոտրել, սիրտ հատցնել, սիրտը նեղվիլ, սիրտը նեսել, բոլորով սրտիվ, ի բոլոր սրտով, ուղիղ սրտով, բաց սրտով դարձվածքներն իրենց անգլե-

1 Գ. Դասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968։ Հայ-անգլերեն բառարանագրության տակ պետք է հասկանալ հայ-անգլերեն և անգլերեն-հայերեն բառարանները։

2 Հ. Հակոբյան, Գրպանի բառարան անգլո-հայ, Բոստոն, 1905։

3 Երան, Նոր գրպանի բառարան կամ գրպանիդ ընկերը անգլերեն-հայերեն և Նոր գրպանի բառարան կամ գրպանիդ ընկերը հայերեն-անգլերեն, Բոստոն, 1906։

4 Հ. Զաքմագճյան, Ընդարձակ բառարան անգլիերեն-հայերեն, Բոստոն, 1922։

5 Մ. Գոյումջյան, Ընդարձակ բառարան հայերեն-անգլերեն, Կահիրե, 1950, և ուրիշի՝ Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն, Կահիրե, 1961։

6 Մ. Մինասյան, Առձեռն բառարան հայերեն-անգլիերեն, Կ. Պոլս, 1902։

7 Ե. Տեմիրճիպաշյան, Բառարան հայերեն-գաղղիերեն, Կ. Պոլս, 1896։

8 Կ. Ոսկյան, Առձեռն բաղդիրը հայերեն-գաղղիերեն, Կ. Պոլս, 1897։

րեն հոմանիշներով: Բառարանում հանդիպում են հազվադեպ գործածական՝ բեղիկոն, երիճաղ, ոռչնական և այլն, զավառական՝ շոշորթ, շար, լազան, մար և այլն, հնացած՝ հավ (հայր իմաստով), մար (հեղանյութ), որթ (հորի նշանակությամբ) բառեր:

Դարասկզբին լույս է տեսնում Հ. Հակոբյանի⁹ անգլերեն-հայերեն բառարանը՝ 8000 բառահոդվածով: Իկն ունի գործնական նշանակություն, որի պատճառով նրանում չկան հնացած, սոսկ զիտական և օտար բառեր: Լեզուներեն գիտաբանների ընտրության ժամանակ, ինչպես վկայում է հեղինակը¹⁰, օգտվել է Վերսալերի «The metropolitan west-pocket» բառարանից, ինչպես նաև Հ. Լեվզերյանի¹¹ և Վ. Հակոբյանի¹² բառարաններից՝ փոխելով և ճշտելով բազմաթիվ բառերի իմաստները: Նկատի ունենալով բառարանի ծավալը, Հ. Հակոբյանն այն կազմել է բնային եղանակով՝ գիտաբանի տակ բերելով ածանցումները և բառաբարդումները: Բառի թև՝ հոմանիշները և թև, բազմիմաստ ձևերն իրարից անջատված են ստորակետերով, որը ստեղծում է շփոթություն: Բառարանում բացակայում են բերականական նշումները: Լեզուներեն համանունները ֆիմնականում ձիշտ են դասակարգված, սակայն կան վրիպումներ: Որոշ համանուններ բերված են որպես բազմիմաստություններ: Օրինակ՝ Can-թիթեղ, աման, կրել, Mass-գանգված, կույտ, դեղ, պատարագ:

Դարասկզբին հրատարակված բառարաններից են նաև Երանի անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն¹³ բառարանները, որոնք ունեցել են մի քանի հրատարակություն՝ երբեմն առանձին-առանձին, երբեմն էլ՝ երկուսը մի կազմի մեջ: Բառարանի անգլերեն-հայերեն բաժինը բաղկացած է 15000 բառահոդվածից, կազմված է բնային սկզբունքով, բացակայում են խոսքիմասային նշումները, Ինչպես Հ. Հակոբյանի բառարանում, այստեղ ևս հոմանիշները և բազմիմաստություններն անջատվում են ստորակետերով: Բառարանում հազվադեպ են բառի գործածության ոլորտը ցույց տվող նշումները: Լեզուներեն համանունների հարցում հեղինակը, ըստ երևույթին, չի առաջնորդվել գիտական սկզբունքներով և հաճախ, տեղ շահելու նպատակով, դրանք տեղադրել է նույն գիտաբանի տակ՝ որպես այդ գիտաբանի բազմիմաստ ձևեր: Ինչպես՝ sound, tense և այլն գիտաբանը պետք է ներկայացվելին երկու կամ ավելի գիտաբանով, որպես համանունություններ: Բառարանի վերջում հեղինակը տվել է անգլերենում գործածվող կրճատումները, բաղաձայնների և ձայնավորների արտասանության կանոնները և զանազան տեղեկություններ Միացյալ Նահանգների վերաբերյալ: Բառարանն ունի հարց ու պատասխանի ձևով ներկայացվող «Զրուցատրության» բաժին:

Երանի հայերեն-անգլերեն բառարանը ընդգրկում է 10000 բառահոդված, կազմված է կիսաբնային, կիսաայբբենական սկզբունքով: Ինքնուրույն և բառաբարդված ձևերը երբեմն տրվում են նույն գիտաբանի տակ: Ինչ աշխատության մեջ տեղի են առնում նշում ունեցող բառերի թիվը համեմատաբար ավելի շատ է, քան նախորդում: Հայերեն համանունները ավելի ձիշտ են սա-

9 Հ. Հակոբյան, Նշվ. աշխ.

10 Նույն տեղում, էջ 2:

11 Հ. Լեվզերյան, Բառարան անգլերեն և հայերեն, Վենետիկ, 1821:

12 Վ. Յ. Հակոբյան, Բառարան անգլերենի ի հայ, Կ. Պոլիս, 1894:

13 Երան, Նշվ. աշխ.

մանադատված: Օրինակ՝ իր (առարկա) որպես գոյական և իր-գերանուն: Բուռն (սաստիկ) մակբայ և բուռն (ձեռքի բուռ) գոյական: Չնայած նրանի բառարանը ներկայացնում է գրական արևմտահայերենի բառացանկը, սակայն այնտեղ տեղ են գտել հնացած, բարբառային և հազվագեղ զործածական բառեր:

Հայ-անգլերեն բառարանագրության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն 2. Փափազյանի բառարանները¹⁴, նրա հայերեն-անգլերեն բառարանը կազմված է այբբենական սկզբունքով՝ պարունակելով 40000 բառահոգված: Հեղինակը նպատակ է ունեցել կազմելու գործնական բառարան վարժարանների ուսանողների համար և այդ պատճառով հատուկ ուշադրություն է դարձրել բառերի ընտրության հարցին: Բառերի հոմանիշներն անջատված են ստորակետերով, իսկ տարբեր նշանակությունները՝ երկու կետով: Անգլերեն գլխաբառերը մեծ մասամբ ունեն քերականական նշումներ: Տարբեր բնագավառների վերաբերող տերմիններն այստեղ առանձնացված են, իսկ որոշ տերմիններ տրվում են նաև գլխաբառերի տակ: Օրինակ՝ Թթու գլխաբառի տակ բերված են բնածխային, ծծմբական, փենական, բորական, բորուսիական, լեւմոնական (թթու): Ընդհանուր առմամբ ճիշտ են տարբերակված հայերենի համանունները, բայց կան նաև սխալներ: Օրինակ՝ Ամուսին (էրիկ) և ամուսին (կին): Կեռ, որպես գոյական և կեռ՝ ածական, որոնք ոչ թե համանուններ են, այլ միևնույն բառի տարբեր իմաստները: Հեղինակը որոշ գլխաբառերի տակ առանձնացրել է դարձվածքները և կայուն կապակցությունները: Այսպես՝ Ձեռք գլխաբառի տակ բերված են ձեռք քաշել, ձեռք անցնել, ձեռք անցնիլ, ձեռք դարնել, ձեռքը-ձեռքին տալ, ձեռքն եկածը ընել, ձեռքը թոթվել, ձեռքի տակեն, ձեռք ըլլալ, նորեն ձեռքը ձգել, ձեռքս չէ, ձեռք մը հագուստ կապակցություններն՝ իրենց անգլերեն համանշանակներով: Փափազյանի երկրորդ աշխատությունը անգլերեն-հայերեն բառարանն է, որը լույս է տեսել 30000 բառահոգվածով և կազմված է բնային եղանակով: Այստեղ գլխաբառի հոմանիշները զատված են ստորակետերով, իսկ տարբեր իմաստները՝ զուգահեռ գծիկներով: Բառարանի հիմնական արժանիքն այն է, որ հեղինակը բառի ուղղակի իմաստից հետո տալիս է նրա փոխաբերական իմաստը և նշում գլխաբառի հոմանիշային ձևերը, որը հեշտացնում է բառարանից օգտվելը: Որոշ բառերի մոտ տրված է զրանց զործածության ոլորտը, փոխառյալ բառերի մոտ նշվում է փոխառության աղբյուրը:

Անգլերեն համանունների հարցում բառարանի հիմնական թերությունն այն է, որ հաճախ զրանք քերվում են նույն գլխաբառի տակ՝ որպես տարբեր իմաստներ: Օրինակ՝ liver, mine, lock և այլն: Այս բառարանը, նախորդների համեմատությամբ, դարձվածաբանական միավորների և կապակցությունների հարստությամբ բավական ճոխ է: Այստեղ ընդգրկված են առական, ասացվածքներ, թեմատիկ արտահայտություններ:

Հայ-անգլերեն բառարանների շարքում լավագույնը, իրավամբ, համարվում է 2. Չաղմագճյանի բառարանը¹⁵, որն ունի 100000 բառահոգված: Եթե նախորդ անգլերեն-հայերեն բառարանները մեծ մասամբ առձեռն կամ զրպա-

¹⁴ 2. Փափազյան, Գործնական բառարան հայերեն-անգլերեն, Կ. Պոլիս, 1903, և ուրիշ՝ Պատկերազարդ գործնական բառարան անգլո-հայ, Կ. Պոլիս, 1910:

¹⁵ 2. Չաղմագճյան, Նշվ. աշխ.:

նի էին, ապա Շ. Չազմագճյանի բառարանն ունի գիտական արժեք և մի նոր խոսք է հայ-անգլերեն բառարանագրության ասպարիզում: Լկյտեղ անգլերեն բառացանկի համար որպես սկզբնաղբյուր ծառայել է Վեբստերի բառարանը, որ, հեղինակի խոսքերով ասած, «Լևիվիճելի հեղինակություն ժրն է անգլիական աշխարհի մեջ»: Բառարանի սկզբում Շ. Չազմագճյանը տալիս է անգլերենի համառոտ բերականությունը, անկանոն բայերի, նախածանցների և վերջածանցների ցանկերը. իսկ վերջում՝ մի քանի կարևոր բաժիններով հավելված: Բառարանը կազմված է կիսաբնային, կիսաալբերնական եղանակով: Բերելով անգլերեն գլխաբառը, Շ. Չազմագճյանը տալիս է նրա հայերեն տառադարձությունը, խոսքիմասային պատկանելիությունը և հայերեն համարժեքը: Հոմանիշները զատված են ստորակետերով, որոշ դեպքերում՝ միջակերտով, իսկ բազմիմաստությունները՝ վերջակետերով: Շեշտ է դրվում թե՛ անգլերեն գլխաբառի և թե՛ հայերեն տառադարձված ձևի վրա: Օրինակ՝ Pürification (փեուրիֆիքեյ՝շըն)—մաքրագործում, մաքրում: Զտում: Բառարանում նշված են անկանոն և փոխառյալ գոյականների հոգնակի ձևերը, անկանոն բայերն ու ածականները:

Նույն գլխաբառով տրված են ուղղագրական տարբերակները, նշված են երկձև արտասանություն ունեցող բառերը: Օրինակ՝ saber, sabre (սէ՛յպր)—թուր, սուսեր: Lever (լի՛վըր. լէ՛վըր)—լծակ:

Շ. Չազմագճյանի բառարանը հարստացնում են անգլերեն գլխաբառերի հոմանիշային և հակահիշային ձևերը, որոնք տրված են գլխաբառի տակ: Օրինակ՝ New գլխաբառի տակ որպես հոմանիշ բերված են novel, recent, fresh, modern և որպես հակահիշ՝ old, ancient, antique, obsolete բառերը: Այստեղ, բացի չեղոք շերտի բառերից օգտագործված են նաև ժողովրդական, ռամկական և զավառական բառեր:

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ անգլերենի և հայերենի զարգացման բնթացքում որոշ մենիմաստ բառեր և բաղմիմաստ բառերի մեկ կամ մի քանի իմաստներ հնացել և գործածությունից դուրս են եկել: Լկյտ երևույթն իր արտահայտությունն է դտել Շ. Չազմագճյանի բառարանում, որտեղ անգլերեն գլխաբառից առաջ տրված աստղանիշը ցույց է տալիս, որ այդ բառը տվյալ փուլում հնացած է, իսկ բացատրության մեջ հայերեն բառից առաջ դրված աստղանիշը նշանակում է, որ անգլերեն բառի այդ մասնավոր իմաստն անգործածական է: Օրինակ՝ "Furial (ածական)—կատաղի: Contrace (բայ ներգործական)—համոզել: "նվաճել: "ձերքել: "Դատապարտել: Բառարանում կան բաղմաթիվ փոխառություններ:

XX դ. գիտության և տեխնիկայի վերելքն իր կնիքն է դրել լեզուների բառային կազմի վրա: Լինելով քիմիայի և կենսաբանության խոշոր մասնագետ, Շ. Չազմագճյանն իր բառարանում ղետեղել է շատ քիմիական և կենսաբանական տերմիններ, քիմիական տերմիններից մեծ մասի մոտ նշելով նաև դրանց բանաձևը: Բառարանում ղետեղված են նաև մեծ քանակությամբ բժշկական, երաժշտական, փիլիսոփայական, հանրաբանական, թոշնաբանական, ձկնաբանական և այլ տերմիններ, փակագծերում տրված են դրանց բացատրությունները: Շատ տերմիններ կան և գլխաբառուրի տակ: Թավաթանց (բս.) և իցաբար (հնբ.) բառերը հեղինակի ստեղծած տերմիններից են:

2. Զաղմագճյանի բառարանը հարուստ է դիցարանական, պատմական անուններով և աշխարհագրական տեղանուններով, որոնց տակ բերված են բաղմաթիվ կապակցութիւններ:

Անգլերէն համանունների հարցում 2. Զաղմագճյանը հանդես է բերել գիտական մոտեցում: Նախ՝ հելլինակը տարբերակել է այնպիսի համանունները, որոնցից մեկը օտար փոխառութիւն է: Օրինակ՝ Log—(լակ) երբ. հեղկաշափ մը, մոտ 100 տրամ: Log—ինկած ծառի բուն կամ խոշոր ճյուղ, կոճղ, փայտ: Եղնգաշափ (նվ.): Ապա նա առանձնացրել է. ա) բառային համանունները՝ Box—պարս (ղոյ.) սոսախ (բս.): Box—(ղոյ.) սնդուկ, Տուփ: Ընդունարան: Օթյակ: Տնակ և այլն, բ) բառա-բերականական՝ Molt—(մօթթ) անկաւար Melt-ի: Molt, moult—(բալ չեղոք և ներդ.) մաս, փետուր, եղջյուր փոխել, գ) բարդ բառա-քերականական՝ Rose (րօզ) անկ. rise-ի: Rose (րօզ) վարդ և այլն: Ստիպել որոշ համանուններ 2. Զաղմագճյանը ներկայացնում է որպէս բաղմաթմաստութիւն, բերելով նախ ղլխաբառով: Օրինակ՝ Murch, Seal, Ball, Band, Temple.

Բր բառարանի առաջաբանում 2. Զաղմագճյանը գրել է. «Ոմեր հաճախ տրված են. ուր որ կարելի եղած չէ բառի մը կիրարկված ոճերը տալ, նույն բառի առումներն կարելի է ճշգրիտ թարգմանութիւն տալ այն ոճերուն, որոնք գրքերուն մեջ կ'պատահեն»՝ նա ղլխաբառերի տակ բերել է մեծ քանակութեամբ զարծվածաբանական միավորներ, սակայն տեղի խնայողութեան պատճառով, բառարանից դուրս են մնացել որոշ կարևոր զարծվածքներ: Բառարանում կան զարծվածաբանական սերտաճումներ՝ To show the white feather—վախկոտութիւնը մատենել (աքաղաղին պոչին վրա ճերմակ փետուրը կովէ փախչող ըլլալու նշան)*, զարծվածաբանական միավորներ՝ To take the bull by the horns—զժվարութեան մեջ նետվիլ, զարծվածաբանական կապակցութիւններ, որոնց մեջ մտնում են բայական կապակցութիւններ՝ To take arm-նշան առնել: To take air-հովեր առնել: Հրապարակել, հռչակել: To take breathe-չունչ առնել, հանգչիլ, գոյականական կապակցութիւններ՝ White house-սպիտակ տուն: Debt of honor-պատվո խոստում, պատվո խոսք, ածականական կապակցութիւններ՝ High and mighty-պոտոտախոտ, գոռոզ: Light of heart-զվարթ, մակրալական կապակցութիւններ՝ High and low-ամեն տեղ: By hook or by crook-ուղղակի կամ անուղղակի, որեւէ կերպ:

Բառերի բաղմաթմաստութիւնը սույն բառարանում հաջող է լուծված: Նախ տրվում են ղլխաբառի ուղղակի, հիմնական, գործածական իմաստները, ապա փոխաբերական և երկրորդական իմաստները, այնուհետև՝ նեղ կիրառութիւնները և տարբեր առումները: Cross-ի հիմնական իմաստն է խաչ, իսկ երկրորդական նշանակութիւնները, որոնք ծագել են հիմնականից, նկատելի են՝ հաշափայլ, հաշանշան դրամ՝ մը (խաչի պատկերով): Տառապանք, հաշանիշ, հաշագիծ (ստորագրութիւն և նաև): Տարագրութիւն (կենդանեաց): Զնա, ձեռք (երկրաշափական): հաշաձև խողովակ: հաշաձևու-

* Անգլիայում և Ամերիկայում սպիտակ փետուրը համարվում է վախկոտութեան նշան: Այն ուղարկում են այն անձանց, որոնք խոստափում են ղինվորական ծառայութիւնից:

թյուն, խաշագծություն էլկ. (երբ երկու հաղորդիչներ իրար դպին դիպվածով):

Հայերեն հոմանիշների տարբերակումը բառարանում կարելի է համարել հաջող, սակայն որոշ դեպքերում հնացած. բարբառային բառերի կամ էլ հոմանիշ դիտված բառերի շարքում կան և ոչ հոմանիշ ձևեր: Օրինակ՝ *Ետ*—կահույր, ճառա, բղուղ, որտեղ կահույր և ճառա հոմանիշները հնացած են: *Hay*—խար, չոր խոտ, ծոր. վերջինս բարբառային կիրառություն ունի: *Gentle*—աղնիկ, աղնվածին, բարեկիրթ, *Մեղմ*, հեղ, փափուկ, գողարիկ, քաղցր, որտեղ գողարիկ, քաղցր բառերը հոմանիշ չեն:

Բառարանի վերջում տեղադրված հավելվածը բաղկացած է մի քանի կարևոր բաժիններից: Լեռանձնապես ուշագրավ է «Լեզվերեն մեջ գործածված օտար բառեր» բաժինը՝ 600 բառահոգվածով, որտեղ կան հունարեն, լատիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն բառեր և արտահայտություններ, որոնք գործածական են անգլերենում:

Դրվատելով Հ. Չազմագճյանի բառարանը, Հ. Տաշյանը նշում է, որ այն մի ընտիր աշխատասիրություն է և իր ընդարձակությամբ առաջինը անգլերեն-հայերեն բառարանների շարքում, ապա ավելացնում է. «...ունի դիտությունաց ամեն ճյուղերեն նորագույն բառեր, որոնք չկան բոլոր նախընթացներուն մեջ: Բնականաբար Չազմագճյան կրնար օգտվիլ նախընթացներեն, բայց օգտված է շրջահայեցողությամբ, ընտրող ըլլալով լավագույնին, ոչ թե բառեր խճողելով, այլ՝ ընտրելով սակավ, բայց լավագույն երեցածը»¹⁶:

1944 թ. Հոս Լեռնիկսում լույս տեսավ Յաղուբյանի «Լեզվերեն-հայերեն և հայերեն-անգլիերեն համառոտ բառարանը»¹⁷, որի երկու մասերն էլ ունեն այբբենական դասավորություն: Լեզխատության անգլերեն-հայերեն մասը պարունակում է 11000 անգլերեն բառ՝ 25000 իմաստով: Իկյս մասի համար հիմնական աղբյուր է ծառայել Վ. Հակոբյանի անգլերեն-հայերեն բառարանը: Երկրորդ՝ հայերեն-անգլիերեն բաժինը պարունակում է 12000 հայերեն բառ՝ մոտ 30000 իմաստով: Սրա համար որպես աղբյուր ծառայել է Մ. Մինասյանի հայերեն-անգլիերեն բառարանը:

Բառարանի առաջաբանում Յաղուբյանը նշում է, որ աշխատությունը կազմված է այն հայերի համար, որոնք մոռացել են իրենց մայրենի լեզուն, հայերեն կարդալ չգիտեն, բայց գոնե իրենց սրտի մեջ պահում են այն: Իկյս-տեղ հայերենը ներկայացված է լատինատառ, արևմտահայ արտասանությամբ և երբեմն հայերեն բառերը հասկանալու համար հարկ է լինում դիմել անգլերենի ոգնությունը: Օրինակ՝ անգլիերեն-հայերեն մասից՝ *Age-darik*, *hasag*, *Heart-sirt*, *gut*, *gorov*, հայերեն-անգլիերեն մասից՝ *Karagop-stone cutter*, *hewer*, *Karaguyd-mass of stone*.

1945 թ. Հալեպում լույս տեսավ Ժ. Խաշատրյանի անգլերեն-հայերեն բառարանը: Իկյս փոքրիկ գրքույկն իրականում անգլերեն ընթերցարանների (*readers*) ցանկ է, չունի այբբենական դասավորություն, յուրաքանչյուր դասի մեջ տրված են օգտագործված նոր բառերը և պարունակում է ընդամենը 1779 բառ:

¹⁶ Հ. Տաշյան, Բառախոսական դիտողություններ հայերեն գրական լեզվի մասին («Հանգես ամսօրյա», 1925, էջ 172):

¹⁷ A. Jacobian, English-Armenian and Armenian-English concise dictionary, Los-Angeles, 1944.

1949 թ. Կիպրոսում լույս տեսավ Զ. Զորայանի «Անգլերեն-հայերեն համայնագիտական բառարանին առաջին պրակը, որն ընդգրկում է a—activity բառահոգվածը: Այստեղ տրված են անգլերենի արտասանական տարբեր ոճերը, դարձվածաբանությունը և հոմանիշների նրբերանգները: Զ. Զորայանը բերում է գլխաբառի դասական, ամերիկյան և ռամկական (ժողովրդական) ոճերը, երբեմն նշելով գլխաբառի հոմանիշային ձևերը: Օրինակ՝ Abnormal—դասական՝ էպիֆոմիեր, ժողովրդական՝ էպիֆոմիեր, ամերիկյան՝ էպիֆոմիեր—տոմարդի: Acinose—դասական՝ էպիֆոմիեր, ժողովրդական՝ էպիֆոմիեր, ամերիկյան՝ էպիֆոմիեր, հոմանիշ Acinous-ի երբեմն նշվում են նաև բառի դործածության ժամանակաշրջանը, թե անգլերեն բառն առաջին անգամ հրք է գործածվել: Բառարանը հարուստ է կապակցություններով և դարձվածքներով:

Հայ-անգլերեն բառարանագրության մեջ իրենց հաստատուն տեղն ունեն Մ. Գույումջյանի հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն բառարանները¹⁸, նրա «Ընդարձակ բառարան հայերեն-անգլերեն» լույս է տեսել 70000 բառահոգվածով, որի առաջաբանում հեղինակը գրում է. «Այժմու իրականության առջև. նոր բառարանի մը արժանիքը պիտի ըլլա առաջացող ժամանակին և առաջագիմող մարդուն պահանջներեն ստեղծված կյանքի նոր երևույթները արտահայտել նոր բառերով»: Բառարանի հայերեն բառացանկում հիմնականում ընդգրկված է արևմտահայերենի բառապաշարը: Մ. Գույումջյանի հայերեն-անգլերեն բառարանի համար որպես աղբյուր ծառայել են Մ. Աբիկյանի¹⁹, Մ. Քաջունու²⁰, Զ. Փափաղյանի²¹, Տ. Կարապետյանի²², Ս. Փաբամաճյանի²³, Լ. Զազմագճյանի²⁴, Մ. Հովհաննիսյանի²⁵, Լ. Փայայանի²⁶ և 30 օտար բառարաններ, որոնց թվում կան հանրագիտարաններ, տերմինաբանական և դարձվածաբանական բառարաններ: Բառարանը կազմված է այբբենական սկզբունքով: Գլխաբառի թե՛ հոմանիշային ձևերը և թե՛ տարբեր նշանակությունները անջատված են կետ-ստորակետով: Գլխաբառի մոտ փակագծերում տրված է լրացուցիչ բացատրություն, որ վերաբերում է կամ օտար ծագում ունեցող բառերին, կամ էլ գլխաբառի իմաստին: Օրինակ՝ լիդա (միջատ): Արկալա (աբաղի): Կաթնաբեր (ղեղ): Հիշյալ բառարանում որպես գլխաբառ բերված են կայուն կապակցություններ, որոնց մեծ մասը բաղադրյալ տերմիններ են: Օրինակ՝ Աղատ փոխանակություն (առևտ.)—Free trade: Երեքի կանոն (մաթ.)—Rule of three: Բառարանը հարուստ է նաև գլխաբառերի տակ բերված կապակցություններով: Այսպես՝ նախարար գլխաբառի տակ բերված են. անպաշտոն, առևտրական, արդարության, արտաքին գործոց, ելևմտից, երկրագործական, ծովային, կրթական գործոց, հանրա-

¹⁸ Մ. Գույումջյան, նշվ. աշխատություններ:

¹⁹ Մ. Աբիկյան, Ընդարձակ բառարան հայերեն-տաճկերեն, Կ. Պոլս, 1891:

²⁰ Մ. Քաջունու, Բազմաբարձր արվեստից և գիտության և գեղեցիկ դպրության (հայերեն-ֆրանսերեն-իտալիական), Վենետիկ, 1893:

²¹ Զ. Փափաղյան, Գործնական բառարան հայերեն-անգլիերեն:

²² Տ. Կարապետյան, Մեծ բառարան հայերեն-օսմաներեն, Կ. Պոլս, 1907:

²³ Ս. Փաբամաճյան, Նոր բառգիրք հայերեն լեզվի, Կ. Պոլս, 1892:

²⁴ Լ. Զազմագճյան, նշվ. ախ:

²⁵ Մ. Հովհաննիսյան, Բառարան հայերեն-ֆրանսերեն, Կ. Պոլս, 1925:

²⁶ Լ. Փայայան, Բառարան-գանձարան հայ լեզվի հոմանիշներու, Կահիրե, 1938:

յին շինությունաց, ներքին գործոց բառերն ու կապակցություններն իրենց անգլերեն համապատասխան հոմանիշներով: Նույն գլխաբառով բերվում են երկձև գրություն և տարբեր ուղղագրություն ունեցող բառերը կամ էլ բառի հոմանիշային ձևերը: Բառարանի հայերեն բառացանկում տեղ են գտել բաղմաթիվ բառեր, որոնք բացակայում են նախորդ հայերեն-անգլերեն բառարաններում:

Մ. Գույումջյանն իր բառարանում տարբերակել է հայերեն համանունների մի քանի խմբեր: Նախ՝ տարբերակել է այնպիսի համանուններ, որոնցից մեկն օտար փոխառություն է: Օրինակ՝ Շահ-օզուտ իմաստով և Շահ (փոխառություն պարսկերենից)—թագավոր նշանակությամբ: Համանուններ, որոնցից մեկը հնացած է: Պրակ-գորբի պրակ և Պրակ-պուրակ իմաստով, որոնցից վերջինը հնացած է: Կարելի է առանձնացնել համանուններ, որոնցից մեկը զավառական բառ է: Տատրակ-թոշուն և Տատրակ-որպես բուսաբանական տերմին, որոնցից վերջինը զավառական բառ է: Համանուններ՝ որոնցից մեկը հսկվագյուտ կիրառություն ունի: Տարագ-հագուստ իմաստով և Տարագ-սունկ. վերջինը հազվագյուտ կիրառություն ունի: Ուշադրության են արժանի նաև այն համանունները, որոնք կազմված են տարբեր խոսքի մասերից, այսինքն՝ քերականական համանուններ են: Տալ (գոյական) ամուսնու բույր իմաստով և Տալ-որպես բայ, ունեն տարբեր խոսքիմասային պատկանելիություն: Սակայն Նեղինակի մոտ հանդիպում են համանունության սխալ տարբերակման դեպքեր, երբ համանունությունը դիտված է որպես բազմիմաստություն, կամ էլ ընդհանրապես: Լէյսպես՝ վար, անդ, այր, բարդ, սան, կար, մաշ պետք է բերված լինեին մի քանի զլխաբառերով, իսկ վարպետ, միաբան, սիրուն, մտերիմ, չար, որոնք ներկայացված են որպես համանուններ, բերվելին մի զլխաբառով: Բառարանում հեղինակը բաղմաթիվ տերմիններ է ներկայացրել, որոնցից մի մասը, բացի ընդհանուր բաժնից, բերված են բառարանի հավելվածի մասնագիտական բառադրույկներում:

Բառարանում կան թղչնաբանական, ձկնաբանական, միջատաբանական, ճարտարապետական, աստղագիտական և այլ բնագավառների վերաբերող բաղմաթիվ տերմիններ, մեծ քանակությամբ աշխարհագրական տեղանուններ, անձնանուններ և դիցաբանական անուններ:

Մ. Գույումջյանի մյուս կարևոր աշխատությունը անգլերեն-հայերեն բառարանն է, որը պարունակում է 100000 բառահոգված: Հեղինակի զլխավոր նպատակն է եղել ստեղծել այժմեական բնույթի մի բառարան: Իրա համար նա օգտագործել է բաղմաթիվ հայ ու օտար բառարաններ, հանրագիտարաններ, տերմինաբանական բառարաններ և անգլերեն-օտար լեզուներով երկլեզվյան բառարաններ: Լէյս բառարանն ունի այբբենական դասավորություն, որն արդեն մի քայլ առաջ է նախորդ՝ Հ. Չազմագւյանի բառարանի համեմատությամբ: Բառարանում թե՛ հոմանիշները և թե՛ բազմիմաստությունները դատվում են ստորակետերով, որն առաջացնում է անորոշություն: Նշված են անկանոն գոյականների հոգնակի ձևերը, անկանոն բայերը և անկանոն ածականների համեմատության աստիճանները: Որպես զլխաբառ բերված են բառերի կրճատ ձևերը և հապավումները: Անգլերեն բառացանկում մեծ թիվ են կազմում փոխառյալ բառերը: Բառարանի արժանիքներից պետք է համարել տերմինային նշումների առատությունը: Լէյստեղ կան բաղմաթիվ մասնագիտական

նշումներ, որոնց շնորհիվ գիտություն, տեխնիկայի, արվեստի և այլ բնագավառների բառերը հստակ կերպով սահմանադատվում են: Բացի հիշյալ բնագավառի տերմիններից, բառարանում տեղ են գտել թղչնաբանական, երաժրյաական, հանրաբանական, ռազմական, կրոնա-եկեղեցական և այլ բնագավառների վերաբերող տերմիններ: Անգլերեն շատ տերմիններ պարզապես տառադարձված են հայերեն. այսինքն՝ ուղղակի փոխառություններ են: Բազմաթիվ բաղադրյալ տերմինների բերված են որպես գլխաբառ, իսկ տերմինային արժեք ունեցող կապակցությունների որոշ մասը տրված է գլխաբառի տակ: Գան տե՛ս-ով բազմաթիվ հղումներ, որոնք վերաբերում են գլխաբառի ուղղագրական տարրեր ձևերին կամ էլ հոմանիշային տարբերակներին: Որոշ բառերի մոտ տրված է ժողովրդական նշումը, սակայն դրանցից շատերը պետք է տրվեին որպես սլենգ (ռամկուրանություն):

Անգլերեն համանունները դասակարգելիս, Մ. Գույումջյանը համախորհում է նախորդ բառարանագիրներին սխալը, այսինքն՝ անգլերեն համանունները դիտում է որպես բաղմիմաստություն: Սակայն ոչ բոլոր համանուններն են սխալ տարբերակված: Բառերի իմաստները հաստատելու համար հեղինակը բերել է բազմաթիվ օրինակներ անտիկ դիցաբանությունից և առասպելներից: Բառարանի վերջում կա «Օտար արտահայտությունների ցանկ»՝ իրենց հայերենի հոմանիշներով, որոնք բաղված են հունարենից, լատինականից, իտալերենից, ֆրանսերենից, գերմաներենից: Իր թերություններով հանդերձ այս բառարանը օգտակար է անգլերեն լեզվի յուրացման գործում:

Բնյուրթում հրատարակված բառարաններից է նաև Պ. Աճեմյանի անգլերեն-հայերեն բառարանը՝ 25000 բառահոգվածով²⁷: Այն կազմված է բնային եղանակով, ունի դպրոցական բնույթ և ոչնչով չի տարբերվում նախորդ առձեռն բառարաններից:

XX դարի 70-ական թվականներին հրատարակված նորագույն բառարաններից է Մ. Գուլազճյանի և Տ. Տխրունու անգլերեն-հայերեն բառարանը՝ 40000 բառահոգվածով²⁸: Սրա ձ-ից մինչև 1 տառը ներառյալ և Ա—Չ տառերը կազմել է Մ. Գուլազճյանը, իսկ Մ-ից մինչև Ն՝ Տ. Տխրունին: Այս աշխատությունը նույնպես ունի պոթնական բնույթ և կազմված է կիսաբնային, կիսաայբբենական սկզբունքով: Գլխաբառի մոտ չկա համապատասխան խոսքիմասային նշում, սակայն, ինչպես վկայում են հեղինակները, նրանք ղեկավարվել են խոսքի մասերի որոշակի դասավորությամբ. նախ տվել են բայերը, ապա գոյականներն ու ածականները, մակբայները և այլն: Հոմանիշներն իրարից անջատված են ստորակետերով, սակայն որոշ դեպքերում դրանք, ինչպես և բաղմիմաստ բառերը, զատված են միջակետերով: Գլխաբառի մեկնություններն ունեն բացատրական բառարանին հատուկ բնույթ, որը այստեղ այնքան էլ հանձնարարելի չէ: Օրինակ՝ Gladjols—փայլուն գույնով ծաղիկ՝ սուրի նման տերևներով. թրաշուշան: Հեղինակները որպես գլխաբառ բերել են կայուն կապակցություններ: Օրինակ՝ Old Testament—Հին Կտակարան, Կայուն կապակցություններ կան նաև գլխաբառերի տակ: Օրինակ՝ War գլխաբառի տակ բերված են՝ Civil—բաղադրյալական (պատերազմ), Holy—կրոնական

27 Պ. Աճեմյան, Առձեռն բառարան անգլերեն-հայերեն, Բնյուրթ, 1953:

28 Մ. Գուլազճյան և Տ. Տխրունի, Անգլերեն-հայերեն արդի բառարան, Բնյուրթ, 1970:

(սրբազան պատերազմ, խաչակրություն), nuclear—հյույսական (կորիդային պատերազմ), Preventive—կանխարգելիչ պատերազմ, Defensive (offensive)—պաշտպանական (հարձակողական) պատերազմ, Բառարանում երբեմն նշվում է զխաբառերի հականիշային ձևերը: Օրինակ՝ nadir (հակ. zenith) Perigee (հակ. apogee): Բերված և բացատրված են զանազան բնագավառների 3000 բառեր ու տերմիններ, Փոխառյալ բառերի մաս նշվում է փոխառու լեզուն, նշենք, որ հեղինակները հիմնականում ճիշտ են տարբերակել անգլերեն համանունները, որը մեծ առավելություն է, սակայն կան նաև սխալ դասակարգման օրինակներ. must, can, saw, lock բառերը, որոնք իրականում համանուններ են, պետք է ներկայացվեն երկու կամ երեք զխաբառերով ինչպես must բառը, բայց տրված են մեկ զխաբառով որպես բազմիմաստություն: Բառարանում տեղ են գտել շուրջ 10000 դարձվածքներ և դարձվածաբանական կապակցություններ, որոնք գործածված են անգլիական դասական գրականության, ժողովրդական և ռամկական լեզվում: Շատ դարձվածքներ և կապակցություններ են տեղադրված Ear, Head, To fly, To hold, I heart և այլ զխաբառերի տակ: Մ. Գուլազճյանի և Տ. Տխրունու բառարանի արժանիքներից են որոշ նոր բառերի կապակցությունների առկայությունը, որոնք չկան նախորդ բառարաններում: Օրինակ՝ Sputnik—արհեստական արբանյակ (առաջին սփուլնիկը արձակեցին Սովետները, 6—հոկտ., 1957-ին): Robot-մարդասնուն: Unknown (soldier)-անձանոթ զինվոր:

Այսպիսով, XX դ. հայերեն-անգլերեն բառարանագրությունը է՛լ ավելի է կատարելագործվում և զիտության ու տեխնիկայի զարգացման համընթաց հարստացում է իր բառացանկը նորագույն տերմիններով և տերմինային արժեք ունեցող բառերով:

АРМЯНО-АНГЛИЙСКАЯ ЛЕКСИКОГРАФИЯ XX ВЕКА

ЛИЛИК ВАРТАНЯН

Резюме

Армяно-английская лексикография XX в., под которой подразумеваются англо-армянские и армяно-английские словари, создавалась за границей. Эти словари большей частью имеют практический характер. К ним относятся: армяно-английский словарь Минасяна (Константинополь, 1902), англо-армянский словарь Аюбяна (Бостон, 1905), англо-армянский и армяно-английский словари Ерана (Бостон, 1906), армяно-английский (Константинополь, 1905) и англо-армянский словари (Константинополь, 1910) Папаяна, англо-армянский и армяно-английский словари Ягубяна (Лос-Анджелес, 1944), англо-армянский словарь Ачмяна (Бейрут, 1953), англо-армянский словарь Гушагчяна и Тхруни (Бейрут, 1970). Исключение составляют англо-армянский словарь Чакмакчяна (Бостон, 1922), армяно-английский (Каир, 1950) и англо-армянский (Каир, 1961) словари Гуюмджяна, которые по объему значительно больше остальных словарей.